

տեսին աղգս Հայոց զհաւատարիմ ծառայութիւն նորա, որ վասն սուրբ Երուսաղէմայ, ապա ի Ռիֆ Թուին հարկ ի վերայ եղին եւ կոչեցին զառաքինի Աւետիս կաթողիկոսն սուրբ Էջմիածնայ, եւ բազում վարդապետք ընդ նմա եւ ետուն զնա ձեռնադրել եւ օրհնել արքեպիսկոպոս սուրբ Երուսաղէմայ:

Աւետիս կաթողիկոսի Երուսաղէմ գլխունուած միջոցին իրեն պատահած էր հոն Մովսէս վարդապետ, որ, ինչպէս տեսանք (էջ 32), իւր առ Գրիգոր Կեսարացի գրած թղթին մէջ (19 Սեպտ. 1615) այս մասին ակնարկութիւն մ'ընելով կը գրէր. «Այժմիկ Դաւիթն այլ գնացեալ է ի Սպահան եւ Աւետիսն կայ ի Էջմիածինն եւ ասվիս զգեցեալ. եւ մեզ սիրելութեան թուղթ է առաքեալ. որ մեր յԵրուսաղէմայ գալն փոքր ի շատէ աստուածավախութիւն տեսաք ի նմա: Բայց Ասլանէ լսեցաք թէ ի հրամանուց կողմանէ թուղթ է եղեր առաքեր ի Կ. Պոլիս», այսինքն առ Գրիգոր Կեսարացի ի Կ. Պոլիս թուղթ գրած է:

Երբ կը վերադառնար Աւետիս Էջմիածին, ճանապարհին (յԱմիդ) կ'իյնայ իր ձեռքը Մելքիսեդեկ կաթողիկոսի առ Ուրբանոս Ը. գրած թղթին տպագիր մէկ օրինակը, զոր Հռոմ տպագրած էին. «Այս գրոյս մէկն ի Համիթ է եկեր. եւ զնորա մէկ օրինակն Աւետիս կաթողիկոսն է տարեր ի հետն. եւ զմի օրի-

---

ներ երկու Հայ պատրիարքներու եւն. Վիեննա 1915, էջ 48. Աղաւնուհի, Միաբանք, էջ 41: